

LEGAL COMMUNICATION AND THE SUBJECT OF LAW: ABOUT THE PROBLEM OF RELATIONSHIP

Ayvazyan Anahit

*applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

In this article, the author thoroughly analyzes the terms legal communication and the subject of law, reveals their substantive features and thinks that the original and true only subject of law is a person. All other so-called subjects of law are legal entities-fiction.

Keywords. person, natural person, legal entity, legal communication, legal fictions, subject of law.

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայկ Շահբազյան

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

Ժամանակակից իրավագետները հսկայական աշխատանք կատարեցին այնպիսի ոչ միանշանակ երևույթի ուսումնասիրության գծով, ինչպիսին է սուբյեկտիվ իրավունքը¹: Եվ տվյալ հարցի հետազոտման ընթացքում մշակված տարատեսակ հայացքները, դիրքորոշումները, հայեցակարգերը ծառայում են որպես այն նյութը, տեսական հիմքը, որը հնարավորություն է տալիս ձևավորել ժամանակակից քննադատական պատկերացումներ սուբյեկտիվ իրավունքի մասին: «Սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի իմաստավորման փորձը՝ հաշվի առնելով ոչ միայն խորհրդային, այլև նախորդ ժամանակաշրջանի իրավագետների աշխատությունները, կարծում ենք, միայն կհարստացնի այդչափ բարդ կազմակերպված

¹ Մանրամասն տե՛ս **Хохлова Е. М.**, Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2008.

երևույթի ընկալումը, ինչպիսին է իրավունքը սուբյեկտիվ իմաստով:

Այսպիսով, հարկավոր է եզրակացնել, որ խորհրդային իրավական միտքը դատարկ տեղում չէր կառուցում սուբյեկտիվ իրավունքի իր ընկալումը: Սակայն կարելի է նաև նշել, որ XIX դարի իրավագիտության մեջ գոյություն ունեցած ուսմունքների ողջ բազմազանությունից ոչ բոլորն են գտել իրենց շարունակությունը: Որպես հիմք վերցնելով Հ. Քելզենի և նրա համախոհների կողմից մշակված սուբյեկտիվ իրավունքի նորմատիվիստական ընկալումը՝ մարքսիստական-լենինյան մեթոդաբանության վրա հիմնված իրավունքի տեսությունը մշակել է հիմնախնդրի իր սեփական տեսլականը:

XIX դարի ու խորհրդային ժամանակաշրջաններում օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի մասին ուսմունքի վերոնշյալ բնութագիրը պետք էր գլխավոր հարցերից մեկին պատասխանելու համար՝ ինչպիսին է գիտության մեջ գերիշխող մոտեցումը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի հարաբերակցության նկատմամբ և որտե՞ղ են տվյալ մոտեցման պատմական արմատները: Տվյալ ենթագլխի շրջանակներում նաև անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սուբյեկտիվ իրավունքի հասկացությանը, դրա հատկանիշներին, կառուցվածքին, սուբյեկտիվ իրավունքի և իրավաբանական պարտավորության հարաբերակցությանը:

Ժամանակակից իրավագիտության մեջ դեպքերի գերակշռող մեծամասնությունում կարելի է հանդիպել խորհրդային ավանդույթի հունի մեջ ձևակերպված՝ սուբյեկտիվ իրավունքի սահմանումները: Օրինակ՝ «Սուբյեկտիվ իրավունքն իրենից ներկայացնում է հնարավոր վարքագծի չափը (ազատության չափը), որը տրամադրված է լիազորված անձին իր շահի բավարարման համար»¹: Կամ Վ. Ի. Աեուշինի մոտ կարելի է գտնել. «Սուբյեկտիվ իրավունքը՝ իրավունքի

¹ См. у **Малиновский А. А.**, Назначение субъективного права // Правоведение. 2006. № 4, էջ 222-30:

նորմում նախատեսված հնարավոր վարքագծի չափ է»¹: Վ. Ցա. Այուրաշեցը մատնանշում է. «Սուբյեկտիվ իրավունքը իրավասու անձի համար նախատեսված՝ նրա շահերի բավարարման համար հնարավոր վարքագծի չափ է, որն ապահովված է այլ անձանց իրավաբանական պարտավորություններով»²:

Արդի ժամանակաշրջանի իրավագիտությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տարանջատման հարցում ընթացել է խորհրդային իրավաբանական մտքի ճանապարհով: Այն է՝ մի քանի տասնամյակ առաջ առաջադրված թեզերը. *«Սուբյեկտիվ իրավունքը՝ օբյեկտիվ իրավունքով սահմանված սահմաններում հնարավոր վարքագծի չափն է»* և *«Սուբյեկտիվ իրավունքը ածանցյալ է օբյեկտիվ իրավունքից»* պահպանել են իրենց գերիշխող դիրքը մինչ օրս: Ա. Գ. Բերեժնովը բացարձակապես չի գերազանցում, երբ անում է հետևյալ դատողությունը. «Դժվար է չնկատել, որ հայրենական իրավագիտության, դրա տեսամեթոդաբանական հիմքերի կարևոր առանձնահատկություն է դարձել իրավունքի տեսությունում, գիտական իրավագիտության մեջ ընդհանրապես այնպիսի հայացքների, պատկերացումների, համոզմունքների, ուսմունքների գերիշխանությունը, որի սկզբունքային և ընդհանուր գիծն է (ուղղակի կամ անուղղակի, սակայն այս կամ այլ կերպ) պրեգյումացումը, «իրավունքի» առաջացման և գոյության ճանաչումը՝ իբրև որոշակի *օբյեկտիվորեն* կանխորոշված բովանդակության և իմաստի, իբրև որոշակի օբյեկտիվ էության»³:

Այսպիսով, հարկավոր է դիտարկել ժամանակակից իրավագիտության կողմից առաջարկվող սուբյեկտիվ իրավունքի սահմանումը:

¹ St'u Теория государства и права: учеб, пособие для вузов / под ред. **В. Д. Перевалова**. М., Норма, 2007, էջ 222:

² St' u Теория государства и права: учеб, пособие для вузов / под ред. **В. Я. Любашенца**. М., MapT, 2003; էջ 527:

³ St'u **Бережнов А. Г.**, К вопросу об «объективном» и «субъективном» в контексте теоретико-методологических проблем правопонимания // Вести. Моек. гос. Ун-та. Сер. 11. Право. № 4, էջ 3:

Տեսաբանների մեծամասնությունը բացահայտում են հետաքրքրող հասկացությունը «չափի» կատեգորիայի միջոցով: Այդպիսի մոտեցման հիմքում ընկած է 1949 թվականին Ս. Ն. Բրատուսի կողմից առաջարկված՝ սուբյեկտիվ իրավունքի իբրև «անձի հնարավոր վարքագծի չափով ճանաչված ու ապահովված»¹: Հարցի նկատմամբ այդպիսի հայացքն առաջացրել է առարկություններ Ս. Ֆ. Քեչեկյանի կողմից, ով նշում էր, որ «չափը՝ քանակական հասկացություն է, որը ենթադրում է տարբեր չափերի համաչափությունը: Մինչդեռ օրենքով ապահովված գործողության հնարավորությունները բավականաչափ բազմատեսակ են և լիովին անհամաչափ»²: Մակայն տվյալ առարկությունը կարելի է, իր հերթին, վիճարկել հետևյալ հիմքերով: Ինչպես ճիշտ էր նշում Յու. Կ. Տոլստոյը, «հնարավոր վարքագծի չափի մասին խոսում է ոչ թե իրավունքի մեկ սուբյեկտին՝ մյուսի հետ համեմատելու համար, այլ՝ այն սահմանները որոշելու համար, որոնցում լիազորվածը կարող է գործել»³:

«Սուբյեկտիվ իրավունք» հասկացության հետագա զարգացումն ընթանում էր դրա բովանդակության պարզաբանման ճանապարհով: Մասնավորապես, Ն. Գ. Ալեքսանդրովն առաջարկել է «չափ» (քանակական չափում) եզրույթի հետ մեկտեղ օգտագործել նաև «տեսակ» բառը (որակական չափում)⁴: Տվյալ կարծիքի վերաբերյալ առարկությունները հիմնվում են այն մասին դրույթի վրա, որ «չափ» եզրույթն արդեն իսկ ենթադրում է ոչ միայն ենթադրյալ վարքագծի քանակական բնութագիրը, այլև՝ դրա տեսակի մատնանշումը⁵: Ընդհանուր առմամբ ժամանակակից գրականության մեջ

¹ Տե՛ս **Братусь С. Н.**, О соотношении гражданской правоспособности и субъективных гражданских прав // Советское государство и право. 1949. № 8, էջ 33:

² Տե՛ս **Кечекян С. Ф.**, Правоотношения в социалистическом обществе. М., Изд-во АН СССР, 1958, էջ 56:

³ Տե՛ս **Толстой Ю. К.**, К теории правоотношений. Л., 1959, էջ 41:

⁴ Տե՛ս **Александров Н. Г.**, Законность и правоотношения в советском обществе. М., Госюриздат, 1955, էջ 110:

⁵ Այդպիսի հայացքը հիմնված է չափի՝ իբրև քանակի ու որակի միասնության կատեգորիայի փոխադասական ընկալման վրա:

արտացոլված են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մոտեցումները.

«Սուբյեկտիվ իրավաբանական իրավունքը՝ լիազորվածին պատկանող նրա շահերի բավարարման նպատակներով թույլատրված վարքագծի չափը, որն ապահովված է այլ անձանց իրավաբանական պարտականություններով»¹:

«Սուբյեկտիվ իրավունքը՝ տվյալ սուբյեկտի իրավունքն է, նրա հնարավոր վարքագծի տեսակն ու չափն է»²:

Հասկացության բովանդակության բացահայտումն անհրաժեշտաբար ենթադրում է այնպիսի հատկանշական գծերի մատնանշումը, որոնք թույլ են տալիս տարանջատել այն հարակից կատեգորիաներից: Ժամանակակից իրավագիտությունը մատնանշում է սուբյեկտիվ իրավունքի որոշակի հատկանիշները: Այդ նույն հատկանիշները միաժամանակ կոչվում են նաև սուբյեկտիվ իրավունքի առանձնացող որակներ՝ օբյեկտիվ իրավունքի հետ համեմատ: Հարկավոր է դրանք ավելի մանրամասնորեն դիտարկել, քանի որ դա թույլ կտա ավելի խորը հասկանալ մեզ հետաքրքրող հարցի ընկալման հանդեպ ժամանակակից մոտեցումը:

Որպես իրավունքի տեսությունում օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տարանջատման չափանիշ, որպես կանոն, կոչվում է՝ 1) իրավունքի պատկանելիությունը սուբյեկտին և 2) դրա կախվածությունը տվյալ սուբյեկտից:

Սուբյեկտին պատկանելիությունը հանդիպում է իբրև սուբյեկտիվ իրավունքի հատկանիշ դեռևս XIX դարի իրավաբանական գրականության մեջ: Այդպես, օրինակ, Ն. Մ. Կորկունովը գրում էր. «Իրավաբանական հարաբերությունները կոչվում են իրավունք սուբյեկտիվ իմաստով, քանի որ իրավունքն ու պարտականությունը կազմում են սուբյեկտի պատկանելիությունը: Առանց սուբյեկտի դրանք գոյություն ունենալ չեն կարողանա... Ընդհակառակը, իրավաբանական նորմերը չեն գտնվում այդպիսի հարաբերության

¹ Տե՛ս **Алексеев С. С.**, Проблемы теории права. В 2 т. Т. 1. Свердловск, 1972, էջ 304:

² Տե՛ս **Лазарев В. В.**, Общая теория права и государства. М., Юрист, 1994, էջ 360:

մեջ սուբյեկտի նկատմամբ... և ուստի կոչվում են իրավունք օբյեկտիվ իմաստով»¹: Մեղմ ձևով սուբյեկտիվ իրավունքի երկու հատկանիշների մասին գաղափարը շատ ճիշտ արտահայտեց Ն. Բ. Մատուգովը. «Սուբյեկտիվը մեր դեպքում ոչ միայն սուբյեկտին պատկանողն է, այլև նրանից կախվածը, իսկ օբյեկտիվը՝ ոչ միայն սուբյեկտին չպատկանողը, այլև *նրանից չկախվածը*»²: Տվյալ դրույթը գրեթե բառացիորեն վերարտադրում են նաև «սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի ժամանակակից հետազոտողները³: Այսպիսով, սուբյեկտին պատկանելիությունն ու սուբյեկտից կախվածությունը դիտարկվում են իբրև սուբյեկտիվ իրավունքի հատկանիշներ:

Հարկավոր է դիտարկել տվյալ բնութագրերն ավելի մանրամասնորեն: Սկզբի համար անհրաժեշտ է անցկացնել վերոնշյալ թեզի համեմատությունը քաղաքացիական իրավունքից սեփականության ինստիտուտի հետ: Պատկանելիությունը որոշակի իմաստով համանման է սեփականության իրավունքի առկայությանը, իսկ կախվածությունը՝ իրի գտնվելուն որոշակի անձի տիրապետության ոլորտում, դրա իրավաբանական ճակատագիր կանխորոշելու հնարավորությանը: Դիտարկելով ավելի առաջ՝ կարելի է նկատել մի հետաքրքիր հանգամանք. ՌԴ-ի Քաղաքացիական օրենսգիրքը, ուղղակիորեն չլուծելով սեփականության իրավունքի մասին հարաբերակցությունը և, եթե այդպես կարելի է արտահայտվել, սուբյեկտից՝ իրի *կախվածությունը*, այնուամենայնիվ, անուղղակիորեն արտահայտվել է դրա վերաբերյալ: Այն է՝ սուբյեկտի անձնական տիրապետության ոլորտում իրի գտնվելու փաստը, այն տիրապետելու հնարավորության փաստը (ըստ էության կախվածությունը) կանխորոշում են սեփականության իրավունքի

¹ См. у **Коркунов Н. М.**, Лекции по общей теории права. СПб., Юридический центр Пресс, 2004, էջ 155:

² См. у **Матузов Н.И.**, Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972, էջ 23:

³ См. у **Хохлова Е.М.**, Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дисс... канд. юрид. наук, Саратов, 2008.

առկայության փաստը: Այդ մասին, մասնավորապես, վկայում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդ. 172-ը «Ձեռքբերելու» հանգամանքը, ըստ որի իրին *de facto* տիրապետելը վերջին հաշվով կանխորոշում է այն *de jure* սուբյեկտի նկատմամբ ամրապնդելը¹: Ամրապնդվածության ճանաչումը կրում է ածանցյալ բնույթ՝ իրի ճակատագիրը կանխորոշելու նախկինում գոյություն ունեցած հնարավորությունից:

Դրանում նախատեսված է տրամադրել սեփականատիրոջը սեփականության պաշտպանության իրավունքը՝ անկախ նրանից, թե արդյոք տվյալ անձը հանդիսանում է իրի սեփականատերը, թե ոչ:

Եթե փորձենք կիրառել տվյալ եզրակացությունները «սուբյեկտիվ իրավունք» կատեգորիայի նկատմամբ, կստացվի հետևյալը՝ սուբյեկտիվ իրավունքի պատկանելիության առանձնացումը սուբյեկտին քիչ բան է տալիս որպես առանձնացող հատկանիշ: Ոչ թե սուբյեկտին՝ իրավունքի պատկանելիությունը ծնում է սուբյեկտիվ իրավունք, ավելի շուտ հենց սուբյեկտիվ իրավունքի ձևավորված փաստը թույլ է տալիս սուբյեկտին դրա պատկանելու մասին: Բացի այդ, եթե սուբյեկտին պատկանելիությունը ճանաչվում է իբրև սուբյեկտիվ իրավունքի հատկանիշ, տրամաբանորեն ճիշտ կլիներ տալ հետևյալ հարցերը՝ ի՞նչ է սուբյեկտային պատկանելիությունը և ինչո՞ւմ է այն դրսևորվում: Հավանաբար, այդ «սեփականին» ինչ-որ կերպ տիրապետելու, դրա վրա ազդելու հնարավորության մեջ: Որևէ երևույթի վրա ազդելու բուն փաստն արդեն մատնանշում է այն, որ այդ երևույթը գտնվում է համապատասխան սուբյեկտի տիրապետության ոլորտում: Այդ առումով արդարացիորեն նշում էր Վ. Ն. Դուրդենեվսկին՝ «Իրավունքի սուբյեկտի և սուբյեկտիվ իրավունքի հասկացությունները կարծես թե երկու՝ միմյանց մեջ անխզելիորեն ներծուլված օղակներ են, և թեպետ ընդհանուր իրավական տեսության դասագրքերում առաջին հասկացությունը սովորաբար համարվում է նախաիրավական, որը նախորդում է երկրորդին, կարելի է մտածել, որ հակառակ ազդեցությունը ոչ պակաս ուժեղ է և հասկացությունների

¹ Տե՛ս ՀՀՊՏ N° 17 (50) 10 օգոստոսի 1998:

օղակների հակառակ դիրքը ոչ պակաս թույլատրելի է»¹: Հենց այդ պատճառով Ն. Ի. Մատուզովի կողմից *առանձնացվող սուբյեկտիվ իրավունքի չափանիշները* (սուբյեկտին պատկանելը կամ չպատկանելը, նրանից կախված լինելը կամ չլինելը) նպատակահարմար չէ դիտարկել իբրև միայնակ հավասարագոր, քանի որ դրանցից մեկը (պատկանելիություն) բխում է մյուսից (կախվածություն), իսկ, ավելի ճիշտ, մեկն ուղեկցում է մյուսին:

Վ. Ն. Պրոտասովը տվյալ կապակցությամբ նկատում է, որ եթե չլինի կոնկրետ սուբյեկտ, ապա չի կարելի խոսք տանել սուբյեկտիվ իրավունքի մասին, քանի որ այդպիսի «իրավահարաբերությունն ըստ բովանդակության ոչնչով չի տարբերվելու իրավունքների ու պարտականությունների վերացական կապից, որը նախատեսված է իրավական նորմերով»², ուստի և չի լինելու իրավունք սուբյեկտիվ իմաստով: Մեկ այլ աշխատության մեջ հեղինակը գրում է. «...սուբյեկտիվ իրավունքն այստեղ կոչվում է «սուբյեկտիվ» մի պարզ պատճառով՝ այն մի բան է, որը պատկանում է *սուբյեկտին*»³: Սակայն այդ ամենից բացարձակապես չի հետևում, որ իրավունքներով ու պարտականություններով օժտված՝ սուբյեկտի կերպարի միայն առկայությունը բավարար է սուբյեկտիվ իրավունքի առաջացման մասին խոսք տանելու համար: Ավելի շուտ կարևոր է հենց սուբյեկտի երկակիությունը, իր կողմից իր սուբյեկտիվ իրավունքի իրական օգտագործումը, այլ ոչ թե իրավահարաբերության մեջ իբրև ստատիստ կամ «փայտյա կուռք» առկայությունը: Հենց իրավահարաբերության դինամիկան, դրա կենսունակությունը թույլ են տալիս ասել, որ գոյություն ունի սուբյեկտ՝ իր սուբյեկտիվ իրավունքով: Դա բացարձակապես չի բացառում այնպիսի դեպքեր, երբ սուբյեկտն իրականում չի իրագործում իրեն պատկանող իրավունքը: Կարևորը դա չէ, նա պետք է իրական հնարավորություն ունենա «տիրապետել»

¹ Տե՛ս **Дурденевский В. Н.**, Субъективное право и его основное разделение// Правоведение. 1994. № 3: էջ 78-95:

² Տե՛ս **Протасов В. Н.**, Правоотношение как система. М.: Юридическая литература, 1991: էջ 113:

³ Տե՛ս **Протасов В. Н.**, Что и как регулирует право: учеб. пособие. М.: Юрист., 1995: էջ 5:

իր իրավունքին, որոշել, թե որ հունի մեջ ուղղի իր մոտ առկա հնարավորությունները: Ուստի հարկավոր է նա մեկ անգամ նշել՝ նպատակահարմար չէ դիտարկել սուբյեկտիվ իրավունքի պատկանելիությունը սուբյեկտին՝ իբրև հետաքրքրող կատեգորիայի առանձնացման ինքնուրույն չափանիշ:

Անհրաժեշտ է դիտարկել սուբյեկտիվ իրավունքի այնպիսի հատկանիշը, ինչպիսին է սուբյեկտից կախված լինելը: Ի՞նչ են հասկանում դրա տակ: Վ. Ն. Բարոպանյուկը նշում է. «Սուբյեկտին պատկանող իրավունքը կոչվում է սուբյեկտիվ իրավունք այն պատճառով, որ սուբյեկտի կամքից է կախված, ինչպես կառավարել այն»¹: Առաջին հայացքից այդ սահմանումը հիշեցնում է Բ. Վինդշեդի կամային տեսությունը: Սակայն դա այնքան էլ այդպես չէ: Ժամանակակից իրավունքի տեսությունը դիտարկում է կամքն արդեն ոչ թե իբրև էություն, ոչ թե սուբյեկտիվ իրավունքի լրացում, այլ միայն իբրև գործիքային բաղադրամաս: Եթե նախկինում կամքը պետք էր սուբյեկտիվ իրավունքի՝ որպես այդպիսի առաջացման հնարավորության համար, ապա այժմ այն դիտարկվում է գործիքային դիրքերից՝ կամքը պետք է սուբյեկտին նրա համար, որպեսզի գիտակցված կամային որոշմամբ ընտրի վարքագծի տարբերակը: Կամքն այստեղ ոչ թե դիտարկվում է իբրև սուբյեկտիվ իրավունքի էական լրացում, այն անհրաժեշտ է միայն սուբյեկտիվ իրավունքի իրականացման համար: Այդ կապակցությամբ Ն. Բ. Մատուզովը նկատում էր. «Օբյեկտիվ իրավունք» եզրույթը, հետևաբար, նույնպես պատահական չէ, այն արտացոլում է իրավունքի օբյեկտիվությունը, այսինքն դրա անկախությունն առանձին անհատի կամարտահայտությունից»²: Տվյալ դիրքին են միանում նաև այլ գիտնականները՝ օրինակ, Ե. Մ. Խոխլովան գրում է, որ տվյալ տեսակետի ճշմարտությունը «ամեն օր հաստատում է փորձը,

¹ См. у **Хропанюк В. Н.**, Теория государства и права: учебник для вузов. М.: Отечество, 1993. էջ 221:

² См. у **Магузов Н. И.**, К делению права на объективное и субъективное // Правоведение. 1971. № 2: էջ 103-111:

իրական կյանքը»¹: «Օգտագործել թե չօգտագործել սեփական անձնական իրավունքը, – գրում էր Վ. Ն. Կուդրյավցևը, – բուն սուբյեկտի գործն է»²:

Սակայն պնդումն այն մասին, որ սուբյեկտիվ իրավունքի տարբերությունը (դրա սուբյեկտիվությունը) օբեկտիվից կայանում է առաջինի կամային օգտագործման մեջ, մեթոդաբանորեն վիճելի է: Էությունը նրանում չէ, որ օբյեկտիվ իրավունքը չի կարելի «օգտագործել», այլ նրանում է, որ ենթադրվող իմաստով դա սկզբունքորեն չի կարելի անել: Տվյալ դեպքում սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի տարանջատման համար առաջարկվող չափանիշերը (կախվածությունը կամ անկախությունը կամարտահայտությունից, օգտագործման հնարավորությունը), չեն արտացոլում այդ հասկացությունների փոխգործության դիալեկտիկան: Այդպիսի մոտեցման պարագայում սկզբից սահմանվում է այն հատկանիշը, որի հիման վրա անցկացվելու է եզրույթների բաժանում, և հետո միայն դրա կիրառման տիրույթը՝ սուբյեկտիվ ու օբեկտիվ իրավունքը: Բսկ այն, որ տվյալ չափանիշը իմանենտ կերպով հատուկ չէ այդպիսի տիրույթին, ինչպիսին է օբյեկտիվ իրավունքը, արդեն ի նկատի չի առնվում: Դա ասես թե ասված լինի, որ երկաթը տարբերվում է փայտից նրանով, որ այն փայտյա չէ: Երկաթի բնութագրի համար (ոչ-) փայտայնության հատկանիշը ներմուծելը նշանակում է անտեսել բուն երկաթի սեփական էական բնութագրերը և, գլխավորը, փորձել բնութագրել երևույթը դրան իմանենտ կերպով ոչ հատուկ եզրաբանության օգնությամբ, ինչը համարժեք է շաշկաների լեզվով շախմատի հանդիպումը նկարագրելու փորձին, հիմնավորելով տվյալ արարքը նրանով, որ երկու դեպքերում էլ հարկ է լինում գործ ունենալ խաղի հետ: Այսպիսով, սուբյեկտիվ իրավունքի սուբյեկտիվության դուրս բերումն օբյեկտիվի հետ համադրելու միջոցով՝ կամային

¹ St' u **Хохлова Е. М.**, Субъективное право и юридическая обязанность в механизме правового регулирования: дис....канд. юрид. наук. Саратов, 2008: № 61:

² St' u **Кудрявцев В. Н.**, Право и поведение. М., 1987: էջ 41:

օգտագործման չափանիշի հիման վրա, վիճելի է թվում:

Վերոնշյալ հեղինակները, բացահայտելով սուբյեկտի կամքից սուբյեկտիվ իրավունքի կախվածությունը՝ այդպիսի կախվածության տակ հասկանում են նաև հետևյալը՝ սուբյեկտի չկապվածությունը վարքագծի հստակ ձևերով իր իրավունքի իրագործման ժամանակ: Ն. Պ. Պրոտասովը հետևյալ կերպ էր զարգացնում այս միտքը. «Իրավունքի (*սուբյեկտիվ իրավունքի*)՝ կախված է լիազորվածի կամքից, իսկ պարտավոր անձի կամքն այդ առումով խիստ դետերմինացված է»¹: Այսինքն՝ այդպիսի կարծիքին համաձայն՝ պարտավոր սուբյեկտը խիստ շրջանակների մեջ է դրված, ինչը չի կարելի ասել սուբյեկտիվ իրավունքի մասին՝ Վ. Ն. Պրոտասովի արտահայտությունից բխում է, որ իրավունքի սուբյեկտի վարքագիծը խստորեն չի կարգավորվում և կախված է նրա կամքից:

Սուբյեկտիվ իրավունքի՝ իբրև սուբյեկտի կամքից կախվածի բնութագիրը թույլ է տալիս բազմաթիվ հեղինակներին բնութագրել այդ իրավունքն իբրև դիսպոզիտիվ:

Ավանդաբար սուբյեկտիվ իրավունքի կառուցվածքում առանձնացնում են երեք իրավասություններ².

1) ***սեփական դրական գործողությունների իրավունք***: Այն ենթադրում է սուբյեկտիվ իրավունքի բուն կրողի ակտիվությունը: Ի տարբերություն պահանջի իրավունքից՝ տվյալ իրավասությունը ենթադրում է «սեփական», այլ ոչ թե «ուրիշի» գործողությունների իրավունք,

2) պահանջի իրավունք (հակառակ կողմից իր վրա դրված իրավաբանական պարտականության կատարման կամ պահպանման իրավունք): ***Հետաքրքիր է տվյալ տեսական հասկացության էվոլյուցիան, «պահանջը» տվյալ դեպքում*** հանդիսանում է նյութական իրավունքի հասկացություն: Բսկ հռոմեական իրավունքում, որտեղից փոխառվել է տվյալ կառույցը, պահանջը, ընդհակառակը, պատկերացվում էր ոչ թե նյութական համատեքստում, այլ առաջին հերթին ընթացակարգային՝ հայցային ձևերի լույսի ներքո: Եթե

¹ См. у **Протасов В. Н.**, Что и как регулирует право: учеб. пособие. М., Юристы, 1995, էջ 5:

² См. у **Алексеев С. С.**, Проблемы теории права. В 2 т. Т. 1. Свердловск, 1972. էջ 308:

գոյություն չունեն հայցի համապատասխան ձևը (action), խոսք չկարճան պահանջների մասին¹,

3) պետության կողմից պաշտպանության իրավունք (հավակնություն): Այն ենթադրում է սուբյեկտի մոտ մշտապես առկա հնարավորություն դիմելու պետությանը խախտված սուբյեկտիվ իրավունքը պաշտպանելու համար: Պետությունը հանդես է գալիս իբրև սուբյեկտիվ իրավունքի ապահովվածության երաշխավոր՝ պետական հարկադրանքի ուժով: Ընդ որում այդ ուժի կիրառման անհրաժեշտությունը կարող է նաև չառաջանալ՝ այստեղ կարևոր է ինքնին պաշտպանվածության որակը:

ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկում է սուբյեկտիվ իրավունքի էության և բովանդակային առանձնահատկությունների վերաբերյալ ժամանակակից հայեցակարգային մոտեցումները, ընկալումները և մեկնաբանությունները:

Բանալի բառեր. իրավունք, օբյեկտիվ իրավունք, սուբյեկտիվ իրավունք, հայեցակարգային մոտեցումներ, մեկնաբանություն:

СОВРЕМЕННЫЕ КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ О СУБЪЕКТИВНОМ ПРАВЕ

Айк Шахбазян

*Соискатель Института философии,
социологии и права, НАН РА*

РЕЗЮМЕ

В данной статье автор обстоятельно рассматривает современные подходы, восприятие и интерпретации о сущности и содержательных особенностях субъективного права.

Ключевые слова: право, объективное право, субъективное право, концептуальные подходы, интерпретация.

¹ «Դա Բ. Վինդելդի ծառայությունն է, որ պահանջի ժամանակակից ըմբռնումը հաղթահարել է հին «հայցային» սահմանները», - գրում էր Բ. Ռեյնհարդը. **Reinhard B.** Allgemeiner Teil des Bürgerlichen Gesetzbuchs. Hamburg. 2006. Էջ 120:

MODERN CONCEPTUAL APPROACHES OF SUBJECTIVE LAW

Hayk Shahbazyan

*applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

Summary

In this article, the author discusses in detail the modern conceptual approaches, perceptions and interpretations of the essence and content features of subjective right.

Keywords. law, objective law, subjective law, conceptual approaches, interpretation.

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Լեոնիդ Նահապետյան

*Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական
շրջանների դատախազության դատախազ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

Հազարավոր մարդիկ ապրում են նույն սոցիալական միջավայրում, նույն կլիմայական գոտում, ունեն զբաղմունքի նույն տեսակը, սակայն այդ մարդկանց համեմատական շատ փոքր տոկոսն է օժտված այն հատուկ հատկանիշներով, որոնք արտահայտվում են հանցագործ վարքագծում:

Եթե նման մարդու գնահատմանը մոտենանք դարերի և հազարամյակների ընթացքում մշակված մարդկային քաղաքակրթության նորմերի տեսանկյուններից, ապա կարելի է ասել, որ նա նախնադարյան վայրենի է, ով ճակատագրի ինչ-որ տարօրինակ քմահաճույքով հայտնվել է ժամանակակից մարդկանց շարքում:

Մարդու ագրեսիան ունի տարբեր դրդապատճառների առավել լայն անչափելի տրամագիծ: Ինչպես շատ ճշգրիտ նշել է լեհ գիտնական Ստանիսլավ Եժի Լեցը. «Եթե վագրը սպանում է գիտակցված, նշանակում է, նրա մոտ արտահայտվում է մարդկային բնագործ»: